# «American Express® Քարտերը Հայաստանում» facebook-յան էջում անցկացվող #myamexcard մրցույթի պայմաններ և դրույթներ

## 1. Ներածություն

1.1 «American Express Քարտերը Հայաստանում» facebook-յան էջում անցկացվող #myamexcard մրցույթը /այսուհետ՝ Մրցույթ/ իրականացվում է ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ-ի կողմից՝ Հայաստանում American Express® Քարտերի գովազդային արշավի շրջանակներում:

1.2 Մրցույթի կազմակերպիչ հանդիսանում է ԱԿԲԱ-ԿՐԵԴԻՏ ԱԳՐԻԿՈԼ ԲԱՆԿ ՓԲԸ-ն /այսուհետ՝ Կազմակերպիչ/:

1.3 Մասնակցելով Մրցույթին՝ մասնակիցը անվերապահորեն ընդունում է սույն Պայմանները և Դրույթները:

1.4 Սույն Պայմաններին և Դրույթներին վերաբերող ցանկացած որոշում համարվում է վերջնական և անվիճարկելի:

## 2. Ընդհանուր դրույթներ

2.1 **«American Express Քարտերը Հայաստանում» facebook-յան էջը** հանդիսանում է Մրցույթի միակ և հիմնական հարթակը: Մրցույթին վերաբերվող ողջ տեղեկատվությունը տրամադրվում է նշված facebook-յան էջում, www.acba.am և www.americanexpress.am կայքերում: Այլ կայքեր, սոցիալական ցանցեր և էջեր հաշվի չեն առնվում:

2.2 Մրցույթը ոչ մի կերպ չի հովանավորվում, ներկայացվում կամ կառավարվում Facebook-ի, Twitter-ի կամ որևէ այլ սոցիալական ցանցի կողմից:

2.3 Կազմակերպիչն իրավունք ունի ցանկացած պահի փոփոխություն կատարել սույն Պայմաններում և դրույթներում, որի վերաբերյալ համապատասխան տեղեկատվություն կտեղադրվի Մրցույթի 2.1 կետում նշված հարթակներում:

2.4 Մրցույթը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն: Մրցույթի հաղթողների մրցանակները տրամադրվում են առանց որևէ հարկային պարտավորության: Հարկային պարտավորությունների կատարումը ստանձնում էԿազմակերպիչը:

2.5 Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում Մրցույթին առնչվող գործողությունների իրականացման ընթացքում մասնակիցների կրած ծախսերի և/կամ վնասների համար:

## 3. Մասնակցության պայմանները, հաղթողները և մրցանակները

3.1 Մրցույթին կարող են մասնակցել American Express բոլոր քարտատերերը: Կից կամ լրացուցիչ American Express քարտի քարտատերը կարող են մասնակցել հիմնական Քարտից անկախ:

3.2 Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է 2017թ. հուլիսի 10-ից մինչև 2017թ. սեպտեմբերի 10-ը ներառյալ իրականացնել անկանխիկ վճարումներ Հայաստանում կամ արտերկրում ցանկացած առևտրի և սպասարկման կետերում (բացառության ինտերնետային կայքերի առցանց խանութների) իրենց American Express Քարտով նվազագույնը 1000 ՀՀ դրամի չափով, այնուհետև տվյալ առևտրի և սպասարկման կետում նկարվել American Express տարբերանշանի կամ իրենց American Express քարտի հետ և այդ նկարը բեռնել իր facebook սոցիալական ցանցի էջում #myamexcard գլխագրով, պարտադիր նշելով առևտրի և սպասարկման կետի անվանումը (օր.՝ #acbacreditagricolebank) կամ նշել իր գտնվելու վայրը եթե վերջինս հասանելի է քարտեզի վրա (location): Նկարը պետք է տեղադրված լինի հանրային տարբեակով և հասանելի բոլոր օգտատերերի համար: American Express տարբերանշանով թերթիկներ յուրաքանչյուր մասնակից կարող է վերցնել Կազմակերպչի ցանկացած մասնաճյուղից, ինպես նաև, առկայության դեպքում, առևտրի և սպասարկման կետից:

Անվտանգության կանոններից ելնելով՝ չի թույլատրվում հրապարակել /post/ նկարներ, որոնք պարունակում են գործող American Express Քարտի ամբողջական տեսքը՝ ներառած քարտի բոլոր տվյալները: Նշված նկարների առկայության դեպքում Կազմակերպիչը պատասխանատվություն չի կրում հետագայում երրորդ անձանց կողմից տվյալների օգտագործման համար:

3.3 3.2 կետում նշված պայմանով հրապարակումներ /post/ իրականացրած բոլոր օգտատերերի միջև 2017թ սեպտեմբերի 20-ին կիրականացվի խաղարկություն և կխաղարկվի 4 հատ iPhone 7 32 GB բջջային հեռախոս: Խաղարկությունը կիրականացվի վիճակախաղի միջոցով, պատահականության սկզբունքով ՝ առցանց հեռարձակմամբ:

3.4 American Express քարտատերերի կողմից 3.2 կետում նշված պայմաններին համապատասխան հրապարակումները /post/ տարածած /share/ օգտատերերի միջև ևս կիրականացվի խաղարկություն և կխաղարկվի 1 հատ iPhone 7 32 GB բջջային հեռախոս: Խաղարկությունը կիրականացվի վիճակախաղի միջոցով, պատահականության սկզբունքով ՝ առցանց հեռարձակմամբ:

3.5 Յուրաքանչյուր American Express Քարտատեր կարող է 3.2 կետում նշված պայմաններին համապատասխան անսահմանափակ հրապարակումներ իրականացնել/post/: Որքան շատ լինեն մասնակցի հրապարակումները /post/, այդքան ավելի մեծ կլինի մրցանակ շահելու հավանականությունը:

3.6 Մրցույթի ընթացքում առավել շատ քանակությամբ հիշատակված Հայաստանի տարածքում գործող երեք առևտրի և սպասարկման կետերին կտրամադրվեն խրախուսական նվերներ և Կազմակերպչի մոտ սպասարկման արտոնյալ պայմաններ:

3.7 Մրցանակը շահած անձը մրցանակը ստանալու համար պարտադիր պետք է ներկայացնի իր գործող American Express քարտը, անձը հաստատող փաստաթուղթ, ինչպես նաև իր facebook-յան էջից անձնական նամակով անհրաժեշտ է հաղորդագրություն գրել «American Express Քարտերը Հայաստանում» էջին՝ նշելով գործող American Express Քարտի 15 նիշ պարունակող համարը և Քարտատիրոջ անուն ազգանունը՝ այնպես ինչպես գրված է Քարտի վրա:

3.8 Խաղարկությանը  կարող են մասնակցել միայն այն օգտատերերը, որոնք կիրականացնեն մրցույթի պահանջները 2017թ. հուլիսի 10-ից մինչև 2017թ. սեպտեմբերի 10-ը՝ Երևանի ժամանակով ժամը 23:59-ը:

3.9 Կազմակերպչի ներկայացուցիչը իրավունք ունի կապ հաստատել Մրցույթի մասնակցի հետ և ստուգել օգտատիրոջ իսկությունը: Եթե մասնակիցը հրաժարվում է, ապա նրա մասնակցությունը կարող է չեղյալ համարվել:

3.10 Խաղարկության հաղթողների անուն ազգանունները և իրենց American Express քարտերի 15 նիշանոց համարների վերջին 4 թվանշանները կհրապարակվեն 2.1 կետում նշված հարթակներում: